



ԽԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55ԴԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 45

3 ՆԱՅԵՄԲԵՐ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Հանգիստ Ն. Ս. Օժոթեան

ԽՄԲ.

Ա. Հ. Հալապեթին

Սկսնակ Բանասերդները

ԳԱՄԷՐ

Լուս Սէր [Վերքում]

ԵԴՈՒԱՐԴ

Գերման Կին Գրողները

ՄԵԼԻՔ ԹԷՎԷՔԷԼ

Սիրին Անանուրիւնը [Վերքում]

ԺԱՆ ՌԱՄՍԻ

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Ջլասը [Վ. Խալսի]

ՄԻԶՐԱՆ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

Պոլիսի Աշխարհաբարին Վերականգնողները

ԱՐՄԵՆԱԿ ԻՆՃԷԵԱՆ

Լեռներուն մէջ

ԶԷՆՐԻՔ ԻՊՍԷՆ-Ի

ԶՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

Անտալուզեան Երգեր

[Ուսումնասիրութիւն]

ՀԱՍՍԷ-Ի

ԼԵՒՈՆ ԷՍԱԶԱՆԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳԻՐ ԶԻԶԱՆ

1907

THE HISTORY OF THE CITY OF BOSTON

FROM THE FIRST SETTLEMENT
TO THE PRESENT TIME

BY NATHANIEL BENTLEY

VOLUME I.

THE FIRST SETTLEMENT TO THE PRESENT TIME

THE HISTORY OF THE CITY OF BOSTON

FROM THE FIRST SETTLEMENT

TO THE PRESENT TIME

BY NATHANIEL BENTLEY

VOLUME I.

THE FIRST SETTLEMENT TO THE PRESENT TIME

THE HISTORY OF THE CITY OF BOSTON

FROM THE FIRST SETTLEMENT

TO THE PRESENT TIME

BY NATHANIEL BENTLEY

VOLUME I.

SO. P. P. L. T. U. U. U. U.

ՅԵՐԱ, ԹԱԳՄԻՄ ՓՈՂՈՅ,

Þ.Þ.Þ. 12

աղիքներու , միջային ճամբաներու հիւանդութիւնները , ջղալին տկարութիւնները , հին և նոր զաղիական ակտերը : Այս վերջին ակտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորադոյն մեթոսաներով կը բուժէ կրճ միջոցի մէջ : Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը : Զորեքայթի օրերը միայն ձրի :



Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լսու մեքենայ մը ունենալ, որովհետեւ լսու մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ զէչ տեսակէ մեքենայ մը անվերջ զսգոհութեանց և տագնապի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհն զիտէ թէ՛

U 1 2 4 5 R

ՀԱՅԹՎՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի

միանգամայն մեկեցաներ

կը գտնուէին :

մեքենան լաւագոյնն է . այս մեքենան ամէնէն աւելի կատարեալագործուածը, հաստատունը և դիւրագործածելին ըլլալուն՝ բոլանդաւայլարհի մէջ՝ ամէն ոք Սիցկերի մեքենաները կը գնէ :

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախսուին միմիայն Սինկերի Ընկերու-
թեան վաճառատուններուն մէջ՝

ՇԱԲԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՄԻՆ

U. S. S. S. S. S.

1. *Ukrainian, 1905, 1906, 1907, 1908, 1909, 1910, 1911, 1912, 1913, 1914, 1915, 1916, 1917, 1918, 1919, 1920, 1921, 1922, 1923, 1924, 1925, 1926, 1927, 1928, 1929, 1930, 1931, 1932, 1933, 1934, 1935, 1936, 1937, 1938, 1939, 1940, 1941, 1942, 1943, 1944, 1945, 1946, 1947, 1948, 1949, 1950, 1951, 1952, 1953, 1954, 1955, 1956, 1957, 1958, 1959, 1960, 1961, 1962, 1963, 1964, 1965, 1966, 1967, 1968, 1969, 1970, 1971, 1972, 1973, 1974, 1975, 1976, 1977, 1978, 1979, 1980, 1981, 1982, 1983, 1984, 1985, 1986, 1987, 1988, 1989, 1990, 1991, 1992, 1993, 1994, 1995, 1996, 1997, 1998, 1999, 2000, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017, 2018, 2019, 2020, 2021, 2022, 2023, 2024, 2025, 2026, 2027, 2028, 2029, 2030, 2031, 2032, 2033, 2034, 2035, 2036, 2037, 2038, 2039, 2040, 2041, 2042, 2043, 2044, 2045, 2046, 2047, 2048, 2049, 2050, 2051, 2052, 2053, 2054, 2055, 2056, 2057, 2058, 2059, 2060, 2061, 2062, 2063, 2064, 2065, 2066, 2067, 2068, 2069, 2070, 2071, 2072, 2073, 2074, 2075, 2076, 2077, 2078, 2079, 2080, 2081, 2082, 2083, 2084, 2085, 2086, 2087, 2088, 2089, 2090, 2091, 2092, 2093, 2094, 2095, 2096, 2097, 2098, 2099, 2100, 2101, 2102, 2103, 2104, 2105, 2106, 2107, 2108, 2109, 2110, 2111, 2112, 2113, 2114, 2115, 2116, 2117, 2118, 2119, 2120, 2121, 2122, 2123, 2124, 2125, 2126, 2127, 2128, 2129, 2130, 2131, 2132, 2133, 2134, 2135, 2136, 2137, 2138, 2139, 2140, 2141, 2142, 2143, 2144, 2145, 2146, 2147, 2148, 2149, 2150, 2151, 2152, 2153, 2154, 2155, 2156, 2157, 2158, 2159, 2160, 2161, 2162, 2163, 2164, 2165, 2166, 2167, 2168, 2169, 2170, 2171, 2172, 2173, 2174, 2175, 2176, 2177, 2178, 2179, 2180, 2181, 2182, 2183, 2184, 2185, 2186, 2187, 2188, 2189, 2190, 2191, 2192, 2193, 2194, 2195, 2196, 2197, 2198, 2199, 2200, 2201, 2202, 2203, 2204, 2205, 2206, 2207, 2208, 2209, 2210, 2211, 2212, 2213, 2214, 2215, 2216, 2217, 2218, 2219, 2220, 2221, 2222, 2223, 2224, 2225, 2226, 2227, 2228, 2229, 2230, 2231, 2232, 2233, 2234, 2235, 2236, 2237, 2238, 2239, 2240, 2241, 2242, 2243, 2244, 2245, 2246, 2247, 2248, 2249, 2250, 2251, 2252, 2253, 2254, 2255, 2256, 2257, 2258, 2259, 2260, 2261, 2262, 2263, 2264, 2265, 2266, 2267, 2268, 2269, 2270, 2271, 2272, 2273, 2274, 2275, 2276, 2277, 2278, 2279, 2280, 2281, 2282, 2283, 2284, 2285, 2286, 2287, 2288, 2289, 2290, 2291, 2292, 2293, 2294, 2295, 2296, 2297, 2298, 2299, 2300, 2301, 2302, 2303, 2304, 2305, 2306, 2307, 2308, 2309, 2310, 2311, 2312, 2313, 2314, 2315, 2316, 2317, 2318, 2319, 2320, 2321, 2322, 2323, 2324, 2325, 2326, 2327, 2328, 2329, 2330, 2331, 2332, 2333, 2334, 2335, 2336, 2337, 2338, 2339, 2340, 2341, 2342, 2343, 2344, 2345, 2346, 2347, 2348, 2349, 2350, 2351, 2352, 2353, 2354, 2355, 2356, 2357, 2358, 2359, 2360, 2361, 2362, 2363, 2364, 2365, 2366, 2367, 2368, 2369, 2370, 2371, 2372, 2373, 2374, 2375, 2376, 2377, 2378, 2379, 2380, 2381, 2382, 2383, 2384, 2385, 2386, 2387, 2388, 2389, 2390, 2391, 2392, 2393, 2394, 2395, 2396, 2397, 2398, 2399, 2400, 2401, 2402, 2403, 2404, 2405, 2406, 2407, 2408, 2409, 2410, 2411, 2412, 2413, 2414, 2415, 2416, 2417, 2418, 2419, 2420, 2421, 2422, 2423, 2424, 2425, 2426, 2427, 2428, 2429, 2430, 2431, 2432, 2433, 2434, 2435, 2436, 2437, 2438, 2439, 2440, 2441, 2442, 2443, 2444, 2445, 2446, 2447, 2448, 2449, 2450, 2451, 2452, 2453, 2454, 2455, 2456, 2457, 2458, 2459, 2460, 2461, 2462, 2463, 2464, 2465, 2466, 2467, 2468, 2469, 2470, 2471, 2472, 2473, 2474, 2475, 2476, 2477, 2478, 2479, 2480, 2481, 2482, 2483, 2484, 2485, 2486, 2487, 2488, 2489, 2490, 2491, 2492, 2493, 2494, 2495, 2496, 2497, 2498, 2499, 2500, 2501, 2502, 2503, 2504, 2505, 2506, 2507, 2508, 2509, 2510, 2511, 2512, 2513, 2514, 2515, 2516, 2517, 2518, 2519, 2520, 2521, 2522, 2523, 2524, 2525, 2526, 2527, 2528, 2529, 2530, 2531, 2532, 2533, 2534, 2535, 2536, 2537, 2538, 2539, 2540, 2541, 2542, 2543, 2544, 2545, 2546, 2547, 2548, 2549, 2550, 2551, 2552, 2553, 2554, 2555, 2556, 2557, 2558, 2559, 2560, 2561, 2562, 2563, 2564, 2565, 2566, 2567, 2568, 2569, 2570, 2571, 2572, 2573, 2574, 2575, 2576, 2577, 2578, 2579, 2580, 2581, 2582, 2583, 2584, 258*

2. Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիսէին դէմ .

БЕЛУ

1. Սիսկէր խան, Թիւնէլին Կոնսւլը .

2. Գաբաթէօյ, Թրամվէյի կայարանին դէմ:

CHURCH

1. $U_{\pi L_1} \sqrt{\theta} w_n$ $\zeta_{\pi d w n}$.

2. Սուլթանն Պէյազիտ, Թրամվէյի կայանին դէմ.18.

ՄԻԻՏՄԻ

2ωρ,ρ ηο|π., ρ. 120 .

Դասերը եւ նորոգութիւնները ձրի .

կատարելով երաշխավորություն :

Մասնանիւղեր գաւառներու բոլոր խաղաքներուն մէջ

Մեծ Փողոց, Թիւ 343 և 343 կրկին, Սարգիս Պէշ Տիւղողլուի տունը:

ՆՍՄԱԿԱՏՈՒՓ

ՏԻԱՐ Գ. Ս [Անքրայ] . — Կը ցտինք որ զրկուած կը մնաք Մասիսի Ալգոմի ստանալու իրաւունքէն , վեցամսեայ միայն մնարած ըլլալնուդ :

ԲՈՂՈՐ ԱՆՈՆՑ որ . . . տակաւին չհասկցան թէ Ալգոմի որոշ պայմանաւորի մը մէջ միայն լատանարդագրուող և ուրիշ շրջանին միայն վնարող լատանարդներու յատկացուած պարգեւ մըն է , վերջին տնգամ մըն ալ բռնեք թէ՛ իրենց խնդրանքը անպատասխան կը մնայ . Ալգոմին իրաւունք ունեցած չըլլալնու չամար , և թէ՛ որովհետեւ չենք կրնար ամէնուն այս բանը հասկցնող համակ գրել : Այս մասին լուսաբանուելու համար , կարգաւ անգամ մըն ալ , մեր պալամեր , փոխան անհայիւ կրկնելու զուր պահանջաւմներ : Ինչո՞ւ չի հասկցալ իր աշխարհ մը բանը :


ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԷՆ անոնք՝ որ ո՛ր և է պատճառով կորսեցուցած Մասիսի իրենց թիւերուն կրկին զրկուիր կը խնդրեն մեզմէ , պէտք է իւրաքանչիւր թիւի համար 40 փարա ներգաւկեն նա խորհրդուն մէջ , ո՛ր ասեմ միայն լսելի կ'ըլլայ իրենց խնդրանքը :

Անձրեւ տաճկերէն կը նշանակէ soqnuq չընկըլ . — Ինչպէս կ'ըլլայ : Այս հարցումը առաջին անգամ լուծուած չըլլալով՝ կը կրկնեմ : Սինչե 15 որ գանողը նուէր պիտի ստանայ եւտմեայ Մասիս՝ խմբագրութեան կողմէ , իսկ Թէսդիկի Տարեցոյց մը՝ իմ կողմէ :

ՍԵԴՐԱՅ ԱՐԱՄԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ . — Բնրացի Թուաբանութեան, Տարր Ա. եւ Բ. տարի—Յօրհեց՝ Զ. Թորոսեան . — Այս դասագիրքը կը պարունակէ՝ քուարկուքիւն , չորս գործողութիւն , հասարակ և տանտնայական կոտորակ , երկրաչափական գլխաւոր ձեւեր և պարզ ծանօթութիւններ , 54 շահեկան պատկերներու ձևեր : Ամէն հաշիւ ու խնդիր օտանեան չափերու և քրաններու վրայ հիմնուած է : Գործին սկիզբը շիւղիկն բացատրուած է ասուցումի եզանակը , որով ամեն ծնողներ ալ կրնան դիւրաւ սորվեցնել իրենց զաւակին : Տնօրէններ գրառուելը դիմելով օրինակ մը ձրի կ'առնեն . զտւումի գրաւաճառներ և տնօրէններ 50 փարայի փոսթի փուլ պէտք է զրկեն իրր ծախք : Գինն է 4½ զրուշ եւ զեզլը 30 օ/ո :

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ . — Վերադառնալու Մահակ էֆ. Գանձեան կը ծանուցանէ իր լազմաթիւ յաճախորդներուն թէ՛ իր Բերալի աշխատանոցը փոխադրած է Մեծ-Փողոց , Սանթա-Մարիա եկեղեցիին դիմացի թիւ 414 աբարքըմանը , ուր կ'ընդունին իր յաճախորդները ամէն օր կէս օրէ ետքը , իսկ Գատը-Քէօյ իր բնակարանը առաջուան պէս մինչև կէսօր միայն :



ԽԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՆԵ ԱՐՄԷՆ

5577. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 45

3 ՆՈՅԵՄԲԵՐ 1907

ԲԱՑՈՒՄԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

“ՄԱՍԻՍ”Ի ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻՒՆ

Մտաւորապէս, Դեկտ. 1ին, կ'աւարտի Մասիսի Նոր Շրջանի Ա. Տարին, զոր բոլորեցինք անսպառ, մեր լրագրական ձեռնարկին մէջ նպատակակէտ ունենալով՝ իրականացնել զրական Հանդէսի մը կոչումը, զոնցում տալ ջանալով ընթերցող հասարակութեան զրական ակնկալութեան և եւ ուրախ ենք որ՝ մեր այս ձեռնարկը ողջունուեցաւ ամէն կողմէ բարձր գնահատութիւնով մը, որ կը շեշտուի օրէ-օր, գնահատական և շնորհատական բազմաթիւ նամակներով զրադէտ և ոչ-զրադէտ անձնատուութիւններու, զորս հասոյքը կ'ունենանք ստանալու ամէն թղթաբերով և Պոլիսէն ալ լսելու բարեկամներէ և ծանօթներէ ։ Բաշտեբական այդ ցոյցերը կը սրտապնդեն մեզ՝ աւելի եռանդով փարելու մեր լրագրական Դորձին, օժանդակուած Թրքահայ գրողներու մեծամասնութեան աշխատակցութիւնով ։ Մեր կողմէ բուն մը չենք աւելցնել մեր բոլորած շրջանին զրական արժէքին մասին, ձգելով որ Դորձը խօսի ։ Այդ կերպը շատ անգամ աւելի պերճախօս է ։ Մեր այն բաժանորդներուն՝ որոնց բաժանորդագրութիւնը կը լրանայ՝ պիտի ուզէինք զիտել տալ այս առիթով թէ՛ պէտք է փութան նորոգելու իրենց բաժանորդագրութիւնը, մինչև Դեկտ. 1 մեզի հասցնելով տարեկան փոխարժէքը Մասիսի, որպէս զի առանց ընդհատումի կանոնաւորաբար շարունակուի աւտըումը իրենց Թերթին ։ Նոյն բանը ո՛չ-բաժանորդներէ՝ անոնց՝ որոնք փափարող են աւաջիկայ տարուան մէջ բաժանորդագրուելու, ինչպէս կը յայտնեն իրենց նամակներուն մէջ ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ



Հ Ա Ն Գ Ի Ս Տ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲԻՆ

ԵՒ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Խոր ցաւով կը գումթենք մահը ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԵԱՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻ-
ԿՈՍԻ : Ն. Ս. Օծուքիւնը իողին աւանդեց թշ. օրը , կէս-օրէն
երեք ժամի չափ առաջ : Այս իսկուր դէպքը ծանուցուե-
ցաւ Ս. Պատրիարքին հետեւեալ հեռագիրով.—

«Ս. Էջմիածին , 11 Նոյ. ժամը 12.20

«Նորին Սրբութիւն Հայրապետն Ամենայն Հայոց հանգեաւ ի Տէր խաղաղութեամբ
ապսօր ի ժամ ինն առաւօտեան : Յուզարկաւորութիւնն որոշեալ է ի 19 Նոյ.ի :

ԱՆԴԱՄ ՍԻՆՈԴԻ

ԴԷՌԴ. ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ»

Դեռ մէկ երկու օր առաջ , Ն. Սրբոսբիւնը քաջողջ կը զգար ինք-
զինքը . բայց ծերութիւնը ընկճեց զինքը : Ս. Պատրիարքը ԲԵ. զիշեր
նետելեալ նեղագիրը աւլղեց Սինոդի նախագահ Տ. Դեորգ Արքեպիս-
կոպոսին . —

« Լ. Պոլիս, 11 Նոյ .

« Անտիկոպ ման Ն. Սրբոսբիւն Կաթողիկոսին Ամենայն Հայոց համակէ զմեզ խորա-
« զշտ » ցաւօր : Ընծայեմք ցաւակցութիւն Սինոդի և Միաբանութեան Սրբոյ Աթո-
« սոյ : Մալմեմք հանգիստ հոգւոյն Հօրն և Քահանայապետին Ս. Եկեղեցւոյ մերոյ :

ՊԱՏՐԻԱՐԻԱՐԻ ՄԱՂԱՌԻՍ .»

Նրջանկայիշատակ Ս. Հայրապետին քաղումը պիտի կատարուի
Նոյ. 19ին : Ուրով , հոգեհանգիստն ալ Մայր-Եկեղեցիի մէջ պիտի կա-
տարուի նոյն օրը :

1836ին Տ. Յովնանեն Կարբեցի Կաթողիկոսին օրով հաստատուած
օրէնքին համաձայն , Ա. Հայոց Ս. Հայրապետին վախճանելէն ետք ,
տեղապահ է Ս. Էջմիածինի Սինոդի նախանգումը , որ նիմա Տ. Դեորգ
Արք. Սուրենեանն է , Տիգրիսի նախորդ Առաջնորդը , որ հրաժարիլ
ստիպուած էր Կալիցին Կուսակալին օրով : Տ. Դեորգ Արք. խոնուն ,
պարկէտ եւ վստահելի եկեղեցական մըն է Ռուսահայերուն մէջ : Վեր-
ջին օրերս , Կաթողիկոսը Սինոդի անդամութեան կոչւած էր Տ. Ներսէս
Արք. Խիւսալմէրսեանը : Նրէ այս առաջարկը ընդունուի Ռուս Կառա-
վարութեան կողմէ , Սինոդի Նախանգամուրիւնը , նետեալաւ Տեղա-
պանութիւնը կը ստաննէ Տ. Ներսէս Արքեպիսկոպոս :

Հանգուցեալ Հայրապետը ծնած էր Վանի մէջ , 1820 Ապրիլ 5ին ,
որով 88 տարեկան էր : Ամուսնացած էր եւ զաւակ ունեցած : Իր կնոջ
մահէն ետքը՝ ընդունեց եկեղեցական կոչումը : Ամենայն Հայոց Կաթողիկոս
ընտրուեցաւ 1892 Մայիս 5ին , եւ օծուեցաւ 1893 Հոկտ. 26ին , Վարա-
գայ Խաչի տօնին օրը : Հետեալաւ , իր Հայրապետութեան տասներջորտե-
րորդ տարին նոր լրացուցած էր : Վերջերս , ընդհանուր կազ-
մական տկարութեան հետ , սիրտի հիւանդութիւն եկած էր վրան .
երբեմն հանգիստ շունչ կ'առնէր , ինչ որ բարւոքում կը կար-
ծուէր . բայց սիրտի յանկարծական տագնապի մը կարող ջէ եղած
տոկալ իր ծերութենէ հիւծած վիճակը եւ մարմինը տեղի տուած է
հարուածին , զրաւելով իրմէ հոգին :

ԳԵՐՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՄՔԵՐ

ԱՆՑԵԱԼ ԴԱՐՈՒՆ ԿԻՆ ԳՐՈՂՆԵՐԸ

Գերման գրականութեան տարեգրութիւններուն մէջ, կանայքի գրականութիւնը և կին գրողները յաճախ իրենց վրայ խօսեցնել տալու չափ ուշադրաւ կողմ մը չէ որ կը ներկայացնեն : Անգլիացի ու Յրանսացի հեղինակուհիներու համեմատապէս, հսկայ խմբակցութիւններուն քով, գերմանականը նահմանալու չափ պիտի դաճաճնար : Լըջախոհ Գերմանուհին երբեք հակամիտութիւնը ցոյց չէ տուած իր անդուգական տանտիկինի յատկութիւնը գրագիտուհիի համբաւին հետ փոխանակելու : Հազիւ թէ անցած հարիւրեակի կէսին, դրազէտներու և մասնաւորաբար վիպագրողներու մեծ խումբին մէջ, կամաց կամաց իր յատուկ տեղը բռնել կը սկսէր վիպագրուհիներու պզտիկ խումբ մըն ալ, գլխաւորաբար կոմսուհի Իտա Հան-Հանէ, Յաննի Լէյպաւտէ, Հանրիէթ Բաազլօլէ և Իտա Փօն Տիւրինկաֆէլտէ կազմուած :

ԻՏԱ. ՀԱՆ-ՀԱՆ. — Հին Յունաստանի մէջ, ամէն տեղ, բանաստեղծուհիները «տասներորդ Մուսա» անունով կը պատուասիրուէին : Արդի Գերմանիոյ մէջ ալ, կին վիպասանները ինքզինքնին գերման ժողով Սանը կը կոչեն, թէ՛ մինչև հիմա իրենցմէ ո՛չ մէկը Յրանսացի հեղինակուհիին հանձարին հաւասարած է : Անոնցմէ մէկը, սակայն, որ արուեստին նմանութիւնով կը մօտենայ քիչ մը անոր, ան ալ կոմսուհի Իտա Հան-Հանն է . լեզուն նուրբ դարձուածքներով ճոխ, կոմսուհի Իտայի ոճը տեղ տեղ իր թերութիւնները ունի, պատկերացումները յաճախ սեթեւեթուած գեղադարձումով մը ճախարակուած են, և իր գործածած գերմաներէնը Ֆրանսերէն բառերու խճողում մըն է պարզապէս, մանաւանդ իր սկսնակութեանը, բան մը որ իր ատենի ազնուապետական ակումբներուն թերութիւնն էր :

Մեքլէմպուրկցի մեծ ընտանիքէ մը սերած, Իտա կոմսուհին նուազապէս չատ աշխարհիկ դաստիարակութիւն մը ստացաւ, և իր հայրն էր որ զուարճասէր կեանքի օրինակը տուաւ իրեն : Քստն տարեկան էր, երբ հարսնացաւ . յետոյ, ձգեց իր ամուսինը, որ իր մօտիկ ազգականներէն էր . զուարճանալու և ժամանակ անցընելու համար, ճամբորդեց Սլաւոնիա, Ֆրանսա, Սպանիա, Իտալիա, անկէ Շուէտ, և մինչև Արեւելք . ուղևորութիւններէն դարձին, կամ Պէրլինի և կամ Տրէզլոտէնի մէջ կ'ընտրէր բնակութիւնը : Քնարերգական բանաստեղծութիւններով էր որ մուտք գործեց գրականութեան մէջ, բանաստեղծութիւններ՝ սրտնք ափսոսալի յաջողութիւն ձեռք չբերին, որչափ իր ետքի վէպերը, ուր ազնուորեալի պաշտպանութեան յայտնի ճիգեր կ'ընէ : Իր ճշմարտազանցական [paradoxal] կարծիքներու շարքին կը միացնէր

կրքոտ յարձակումներ ամուսնութեան դէմ, ուր կինը մինչև իսկ մթին ու անյայտ պարտականութիւններու աստիճանին հոսցուած, կ'արգիլուի արդիւնաւորապէս գործելէ ընկերութիւններու մէջ: Կնոջական նկարագիրը ամէնէն աւելի համակրական գիծերով պատկերացուցած է կոմսուհի Փառսթինի տնէին մէջ, իր համանուն վէպով. «Փառսթինը, կ'ըսէ հեղինակուհին իր յաւաջտըանին մէջ, գեղեցկութեան, հանճարի ու շնորհի պսակը կը կրէ. սիրտերու դշխոն է ան, տեւական, յաւիտենական, անսպառելի գոհացումը պահանջող. կ'ուզէ զայն, ինչ որ ալ ըլլայ, և կը մերժէ այն բանը՝ որ չընձեռեր զայն իրեն: Հոն ուր իր նայածքը կը տարուի, կը հմայէ, կը յուսահատեցնէ. երջանկութիւն ու մահ կը սիւսէ ան միանգամայն»: Փառսթին՝ վէպին հերոսուհին, տեսակ մը իդէական Տօն Ժուան է. նախ կը ձգէ իր ամուսնը, զոր սիրած չէ երբեք, պառնոյ մը ետեւէն երթալու համար: Յետոյ, երբ պառնը ա'լ չկրնար առլ «իր գոհացումը», կոմսի մը կը սիրահարի: Այս անգամ ճշմարիտ կիրք մըն է որ զինքը կը յափշտակէ, կը կաշկանդէ կատաղութեան թափով մը, և շատ չանցած կը մարի, քմահաճօքէն աւելի չուտ. ան ասունը, Փառսթին վանքի մը դուռը ամի կ'առնէ. հոն, մենաստանի այդ մթին խուցերուն մէջ, կը փորձէ սիրել Աստուած, չկրնալով սիրել արարածները: Այս վէպը, ծայրէ ծայր, իր կենսապաշտ հեղինակուհին վարած կեանքին հարազատ մէկ պատկերացումն է թերեւս:

Իտա կոմսուհին վէպերը, ընդհանուր առումով, չինիչ գաղափար մը չէ որ կազմել կուտան քառասունական թուականներու գերման աղնուորեարին բարքերուն վրայ: Ֆրանսայի ընկերային բարքերու յեղաշրջումները, որոնց ուժգին հակահարուածը իր տոհմավայրն ալ ցնցեց, տեսակ մը սարսափով պարուրեցին զինքը. և պառն Փոն Բէթէէրի—յետոյ Մայանսի եպիսկոպոս — քարոզութիւնները անդրալեւնական դաւանութեան մը ծոցը նետեցին յանկարծ Ֆառաքիների հեղինակուհին, որ, առանց անցումի, զարդախուցէն աւանդատուն մտաւ, և այն աշխարհիկ խօլ կինը ապաշաւող Մարիամ Մադդաղենայի մը եղաւ, բովանդակ Գերմանիան ապշութեան մասնելով: Բաքեշոնեմ Երուսաղէմը [1851] իր դաւանական դարձին ամբողջ բացատրողական պատմութիւնն է: Այլ ասկէ ետքը, վանքէ վանք, մենաստանէ մենաստան պարտեցաւ, աշխարհիկ ակումբներու կեանքոտ մթնոլորտը մենաստաններու միսթիք մթնոլորտին հետ փոխելով. օրին մէկն ալ գնաց Մայանս հաստատուելու, ուր վանք մըն ալ ինք չինեց, աւատապետական հինաւուրց զգեստներու աւերակներուն վրայ, Հոսնոսի եղերքը: Բայց Պերլինի աղնուաղետական «սալօն»ներուն նախկին յաճախորդուհին հոս ալ չուզեց քաշուած կեանք մը վարել. վերջապէս իրենը չէր եղած այդ ճաշակը. իր յարածուն գործունէութիւնը բաժնեց նորա-

դարձներու որսորդութեան և իր վերջին վէպերուն հրատարակութեան միջև , վէպեր՝ որոնք — պէ՛տք է ըսել — կաթողիկոսութեան ու վանական կեանքի ջատագովականներն են :

ՊԱՆՆԻ ԼԷՎԱՍ աւելի՛ չափաւորուած բնաւորութիւն մը և աւելի՛ հաւասարակշռուած խտնութեամբ մը ունի , զգացումով զեղուն սիրտ մը , իբր կին զրոյ իր դերին բովանդակ գիտակցութիւնովը առլցուած : Երեւակայութիւնով ու ստեղծելու յատկութիւնով հախորդէն ստորագաս , բայց առողջ գառողութիւնով ու կանացի ներգործիչ շնորհով աստիճան մը աւելի բարձր է Ֆառաքինի հեղինակուհիէն : Անկողմնակալ քննադատութիւններ իր վրայ գտած են Քանթեան անյուշութիւն մը , հանդարտ , անխուլ՝ բայց անյողդողդ. ու խորաթափանց : Միակ զէպք մը , որմէ օգտուելով գրեց իր Եհննի վէպը , պահ մը խանդարեց իր կեանքին հանդարտ ընթացքը : Տասնեօթը տարեկանին բողբոսկան եղաւ՝ ամուսնանալու հոմար աստուածաբանութեան թեկնածուի մը հետ . հաւատարացութեան դադափարը , սակայն , տանջեց զինքը ներքնապէս , զղջաց ըրածին վրայ , և Լէվալտ հրաժարեցաւ ծրագրուած միութենէն : Յետոյ , զբաղէտ Ատօլֆ Շթարի հետ ամուսնացաւ : Փաննի Լէվալտ , ինք ալ , գրիչ չարժեքայն մեծ խնդիրին վրայ , որուն շուրջը դարձան իր ատենուան ըրտը կին զրոյներն ալ , և արիւթար լուծեց զայն , պարտականութեան տեսակէտով : Ընկերային չահը մասնաւորէն վեր դասեց ինք : Իր վէպերուն մէջ ստեղծած հերոսուհիները , սովորաբար , բանաւոր ամուսնութիւններ կը կնքեն , և երբ իրենց ընտրանքին մէջ խաբուին , վեհանձնօրէն կը կրեն իրենց «սխալանք»ին հետեւանքները , կամ աւելի ճիշդը՝ անոնց [այրերուն] անհաւատարմութեան հետեւանքները : Սիրտին փոփոխականութեան , սիրոյ անկայունութեան յաւիտեանկան պատմութիւնը չէ՞ աս ալ , որ , իրմէ շատ ետքերն ալ , դեռ մինչև այսօր կը զբաղեցնէ վիպասանները , դերերու փոփոխումներով միայն . վէպերու մէջ , ընդհանրապէս , կինն է որ կը զրոյ գերագոյն խոստումին կամ արատ կը բերէ ամուսնական հաւատարմութեան և մարդը զո՞հ կ'ըլլայ ասոնց : Փաննի Լէվալտի վէպին մէջ դերերը կը փոխուին . հոս կինն է որ հաւատարիմ կը մնայ և իր կեանքի ընկերին անհաւատարմութեան կը զոհուի : Դիտելի կէտ մըն է որ՝ բոլոր կին վիպասաններու գործերուն մէջ կինը թշուառ կ'ըլլայ և էրկիմարդը անդուծ , բայց իրաւունքը կիներունը չէ՞ , որոնց սիրտին փոփոխականութիւնը , աշխարհիս սկիզբէն ի վեր , յեղեղած են էրիկ մարդիկ ու կը յեղեղեն , իբր թէ իրենցը ժայռի պէս ամուր րլլար : Ինչո՞ւ վիպասանը նպատակակէտ չընէր մարդկային սիրտը քննել, ճերմակ փափուկ լանջքի մը տակ բաբախէ անկամ մազոտ կուրծքի մը սակ , մարդկային սիրտը իր մշտատու յուզումներուն մէջ, Եհննիի հեղինակուհիին վիպային դարձուածքները թէև ո՛չ այնչափ

կնճռատ ու մանուածապատ , նայն իսկ նուազ լինքնատիպ , սակայն հոգեբանական վերլուծումները յաճախ նրբարուեստ են , խորադնին և խորհրդածութիւնները ուշադրաւ : Տիօթինաի մէջ , Լէվալա քիչ մը ծանր կերպով ծաղրած է իր հակառակորդութիւն , — Իտա կոմսուհին : Իր այդ գործը հրատարակել տուած է Grafia Iduna H. H. անունով : Տիօթինա իր ամուսինէն բաժնուելէն ետքը , աշխարհի կէսը կը պտըտի . ոչ մէկ տնտարան զինքը կը հետաքրքրէ , ոչ մէկ վայելք զինքը կը գոհացնէ , և յիմարանոցի մը չորս սլոտերուն մէջ կը փակուի վերջապէս : Իր Լուսիկի Ֆեթսինանսը [1849] Պերլինի ընկերութեան բարացուցական մէկ նկարն է Իէնայի նախընթաց օրը առնուած :

Երկու հեղինակութիւններու այս փոքր խումբէն զատ , ոչլտիկ յիշատակութիւն մըն ալ ուրիշ երկու աւելի հին գրադիտութիւններու վրայ , որոնք ա՛լ չեն կարգացուիր թէև , բայց առնելով ունեցած են իրենց համբաւի օրերը . ասոնք են , Ա. —

ՀԱՆՐԻԷԹ ԲԱՍՉԼՈՎ [1798-1847] որ աղնուորեարի բնածին առաքինութիւններուն վրայ կոմսուհի Հան-Հանի միեւնոյն դադափարները ունի : Իր համբաւը , մեծ մասով , յաճախած ակումբներուն չորս սլոտին մէջ խտացած է . Godwie-Castle [1836] իր լաւագոյն վէպն է , նմանողութիւն մը Ուոլթրի Սքոթէն : Եւ Բ. —

ՊԱՌՈՆՈՒՀԻ ՖՕՆ ՏԻՐԻՆԿՍՅԷԼՏ [1815-1876] , որ կանխահաս հանճար մըն է և որ երբեք չէ ունեցած իր կատարեալ հասունութիւնը : «Ոտանաւորներ կը գրէի այն տեսակ տարիքի մը մէջ , կ'ըսէ , ուր կարդալ իսկ չէի գիտեր» : Առաջին բանաստեղծութիւնները հրատարակել տուաւ 1835ին , Թէքէլա կեղծանունին տակ : Անկէ ետքը երկարատեւ ճամբորդութիւններ ըրաւ , որոնցմէ բաւական մը հմտութիւն ձեռք բերաւ : Ֆրանսերէն ու Իտալերէն լեզուները սորվեցաւ , ուսումնասիրեց Չեչերէնը , Ֆլամաներէնը ու Սլաւական գաւառաբարբառները : Իր առաջին վէպը՝ Կոզիկնի Դոնակըն՝ իր ընդհանուր գիծերուն մէջ նախորդին Godwie-Castle կը յիշեցնէ : Քանի մը տարի ետքը , 1847ին , Մարկրիք Տը Վալուաով պատմական սեռն ալ փորձեց . Յիշատակներու Վեպ մը կոչեց իր այդ գործը , որ , իրաւցնէ , իր ժամանակուան յիշատակներուն մէկ ծաղկաքաղն է : Իր գործերուն ամէնէն օգտակար մասը , թերեւ , պարտած երկիրներուն ժողովրդական երգերուն նմանողութիւնն է , Böhmische Rosen [1851] և Lieder aus Toskana [1855] : Պատմութիւն Իտալի վէպերը կանխահաս երկատիրութիւններ են , որոնք աւելի «սալօնի» խօսակցութիւններու կը նմանին :

ՄԵԼԻՔ ԹԷՎԷՐԷԼ

ՀԼԱՏԸ

Գ.

Եւ ահա՛ սկսան երիտասարդ պաշտօնեային աչքին առջեւ պարզուիլ քիչ քիչ, աստիճանաբար, դիւթական համայնապատկերներու նման, զանազան սիրելի հեռանկարներ ու մտաւարկարներ: Անոնք փայլուն էին ու հրապուրիչ: Բայց չունէին ազետալի փորձականութիւնը ա՛յն խորեպատիր ու կործանարար տեսերիւոյթներուն՝ որոնք երկար ատեն քնացած ու լճացած զանկութիւններու հետ ա՛յնքան դիւրութեամբ կը հաշտուին ու կը նոյնանան անոնց հետ: Արտէն, հակառակ իր զգայնոտ ու դիւրագրգիռ խտւեռածքին, ժուժկալութեան կուսակից մըն էր: — Իր երազներուն մէջ, ապահովաբար մասնաւոր ու նուիրական խորշ մը ունէր, Սիրանուշին ապագային հարցը: Իրենը ապահովուած կը նկատէր: Բայց դեռատի ազջկա՞նը: — Հազիւ տասերկու տարեկան, արեւելեան թաւափափուկ ու կաթնաթուր մորթով ու սեւ, նշաճեւ աչքերով շնորհազեղ ազջիկ մըն էր ան, մտացի և արթուն, մօրը հարազատ մանրանկարը, որ անոր մահուընէն ետքը — հայրը աւելի առաջ մեռած էր — Արտէնի պաշտպանութեանը ենթարկուած, կը շարունակէր թաղին վարժարանը յաճախել: — Երիտասարդը հիմա իր ծրագիրը չիւնած էր: Սիրանուշը, դպրոցական վերամուտին, գիշերօթիկ վարժարան մը դնել, որպէս զի ան օգտուի միեւնոյն ատեն ընկերային-ընտանեկան դաստիարակութեան յարիւրներէն, ինչպէս զոլութիւններ ընել՝ իր ծախքերուն մէջ և աւելցած դրամը շահագործել: Մնացածը — տունը տեղը ելն: — Իր արդի դիրքին մէջ անփոփոխ պահել:

Եւ սակայն ամէնը այս չէր իրեն ժպտած հեռանկարներէն: — Իր անտեսական ձգտումները խոհեմ ու զգուշաւոր կերպով մը գլուխ հանելէն ետքը՝ կը մնար պսակել իր իւր աշխարհիկ մարդ-մնուցած նկատումները և բազմանքները, իրականին մէջ ո՛չ տարբեր հաճելի ու չողջողուն երազներէն: Այն լեցուն ամսաթուղակը՝ զոր իր արժանիքին ու կարողութեանը իւր վարձք կը՝ ստանար հիմա, և որուն ամէն տարի յաւելումներ կրելուն յոյսը ունէր, զինքը շնորհքով ապրեցնելու և իր դիրքը մեծապէս բարեփոխելու, իր ընկերային պատշաճ ըմբռնումներուն, ինչպէս փափաքներուն գոհացում տալու լուրջանդակ առաւելութեամբ կը ներկայանար: Իսկապէս՝ սիրահար մը չէր եղած ինք սակայն գրագրութեան պաշտօնին: Գիւնանկալութիւնը (bureaucratie) կ'ատէր եւ եթէ կոչուած էր այդ զբաղումին ու կը կատարէր իր դերը զարմանալի յաջողութեամբ մը, ասիկա պարագաներու ըրումին կը պարտէր աւելի, քան իր մասնաւոր յարմարութեան: Եւ իրաւոյնէ, երբեք խորհած չէր, այդ ստրկացող, զրեթէ մանրանայուցիչ աշխատութեան: Գրագրութիւն: Այդ մեքենական, միակերպ զբաղումը որ

ա՛յնչափ ջիւղերը թունդ հանած է շատ մը գրիչի մարդերու , ինչպէս Մօքասանին ու Վէսլէնին — Արսէնի պաշտած հեղինակները , վարպետները : — Մօքասանի գծած հաւատարիմ պատկերին հանդիպած էր արդէն անոր գործերէն մէկուն մէջ ու սիրաւ սեղմուած : Իսկ Վէսլէնինը ճակատագրականօրէն դժնդակ էր , անոր համար որ մեծ հեղինակը անձնապէս այդ ասպրախտ ասպարէզին դերակատարներէն մէկն էր եղած՝ բախտին անողոք մէկ քմահաճոյքովը : Օր մը , դիպուածով , Արսէնին աչքին տակ ինկած էր ֆրանսերէն թերթ մը , որուն ամէնէն չափական սիւնակներէն մէկն էր քաղուածք մը *Sagesse*ի հեղինակին պաշտօնեայի կեանքէն էջի մը , արդիւնք՝ իր ամէնէն մոտերիմ բարեկամներէն էտմօն Լըբէլթիէի գրիչին : Ո՛րչափ նմանութիւն՝ այդ հոյակապ բանաստեղծին պաշտօնական կեանքի շարժուձեւերուն և իրենիւնրուն միջեւ : Եւ գաղափարներու ընկերակցութեան օրէնքով դիտած այդ տարօրինակ հանգիստութիւնը շատ հետաքրքրական գտաւ : Միեւնոյն յուզումները , զրկանքները , պատրանքները , միեւնոյն ոչխարային համակերպութիւնը — կրկնում ընդգծումներով ընդմիջուած — և դարձեալ միեւնոյն անտարբերութիւնը կամ անկարողութիւնը՝ ո՛ր և է ուրիշ պաշտօն մը գտնելու մասին : Ան ալ իրեն պէս «գիւանակալութիւնը ո՛չ մէկ կերպով իրեն յարմար ասպարէզ մը չէր նկատեր , առանց սակայն տարբեր դիրք մը փնտռելու , առանց միտքը զբաղեցնելու արդիւնաբեր դրականութեան մը մտածումով : Ան կը սպասէր պաշտօնեայի տեսակ մը ճակատագրականութիւնով , թոչակի եռամիսյ կանոնաւոր յաւելումներուն , ռոտանտօրներ շինելով , առանց փոխ-դիւանապետ ըլլալու մտահոգութեան . . . » : Այս և այս կարգի պարագաներ զարմանալիօրէն աղդեցիկ տպաւորութիւն մը գործած էին Արսէնի վրայ — Թուբէն աղայի զրասնեակին չորս պատերաւն անհրապօյր մթնոլորտին մէջ բանտուած շրջանին : Պէտք է աւելցնել , — հոգեկան իր այս կայութիւնը աւելի յատկանշական կերպով ցայտեցուցած ըլլալու համար , — թէ՛ իր բանաստեղծի , արուեստագէտի յաւանութիւններն էին քիչ մըն ալ պատճառ՝ այդ պաշտօնին դէմ իր անսիրելութեան , իր միտքին մէջ արմատացած ըլլալուն սա՛ ըմբռնումը թէ՛ այդ երկու դերերը իրարու հետ չէին կրնար հաշտուիլ երբեք , առանց իրարու վնասելու : Արսէն անկախ ասպարէզը սիրած էր : Իր երազն էր եղած , կանուխէն , միմիայն Արուեստին նուիրել ինքզինքը : Բայց արուեստին հօրը շատ շուտ վառած ու գրեթէ մարած էր կուրծքին տակ — տափակ իրականութեան , ասպրելու անողոք պէտքին առջեւ :

Իր կոչումէն չեղելով , բոլորովին դժբախտ չեղաւ սակայն : Այդ մոլորումը որ ուրիշներու համար կորուստ մը կրնար ենթադրուիլ , իրեն համար տեսակ մը փրկութիւն նկատեց : Ի՛նքն ալ՝ ունեցաւ իր գառն յուսախաբութիւններուն , իր ցնորայուսութիւններուն անխուսա-

փեղի չըջանը : Գիշերները , երբեմն , իր քունը անուշցնող երազներուն մէջ , — մինչեւ իրիկուն արուեստագէտի պատրանքովը օրօրուած ըլլալուն , — ի՛նքն ալ լսեց , — ճշ անգութ հեգնութիւն , — իր չուրջը զուռացող ծափեր , կեցցէներ և բարձրագոյն ձայներ չորս կողմէն՝ զինքը վերաթին բեմ հրաւիրող , ամէնքն ալ իր տաղանդին մասին հիացումով ու յափշտակութեամբ լեցուած : Այս մտառալպարին քով , ուրիշներ ալ կային , թերեւս օր մը յաջողութիւնով պոսակուելու սահմանուած : Կեանքը լիաթոք ու լիաշուրթ վայելելու մեծ երազն էր ան՝ իր այլազանօրէն յափրացուցիչ ձգտումներուն մէջ : Արդիական չուայլ ու անխնայ կեանքին զարհուրելի յուզումներուն ինչպէս կիրքերուն և շանթաճարիչ անակնկալներուն vertigeeով մտաղնոր իր գլուխին մէջ կը բզզային տակաւին , երկար ատենէ իվեր , դիւրին ու փարթամ ճօխութիւններէ կրած իր տպաւորիչ զգայութիւնները . . . : Հակառակ այդ կեանքին զգացած սոսկումին , ատոր հասնելու անձուկէն կը մեռնէր . . . : Ընկերային արդի շնչասպառ ու հեացող ապրելակերպին հետ իր հայեացքները և ախորժակները բոլորովին հաշտ չգտնուէն հակառակ , կ'ուղէր իր մասնաւոր տեղը ունենալ այդ ընկերութեան մէջ , աւելի իբր մերձաւոր հանդիսատես քան դերակատար , առանց սակայն վնասելու իր աւանդական ժողովալութեան սկզբունքին , առանց դիմելու յոռի բնադդներու օգնութեան : Պիտիւ կրնա՞ր չըմուռնիլ ու չքշուիլ այդ կեանքին վնասակար հրապոյրներուն հոսանքէն . . . : Իր բազմաթիւ յարաբերութիւնները պատճառ էին որ ամբողջին մէջէն իբր կարկառուն դէմք մը ճանչցուած ըլլար և իր դիրքին արագ բարձրացումներ կրելու հեռանկարին հմայքէն ներշնչուելուն էր որ եռանդուն ու տենդոտ աշխատութեան մը սկսած էր նուիրել ինքզինքը : Իրաւ , իր ասպարէզը չէր փոխուած , — Ռուբէն աղայի գրասենեակէն դրամատունի մը գրասենեակին տուել անցնելով , — բայց իր դիրքը , իր ապրելու պայմանները , իր միջավայրը . — ուր շատ մը պաշտօնեաներու հետ հաճելի ծանօթութեան և անձանձրոյթ աշխատակցութեան մը մէջ կը գտնուէր , — և վերջապէս ուրիշ քաջալերական պարագաներ իր հիմակուան պաշտօնը իրեն սիրցնել տալու կը նպաստէին մեծապէս : Եւ յետոյ , դրամատունի մը քարտուղարի տիտղոսը անհամեմատ աւելի կշռող հրապոյր մը չունէ՞ր «Ռուբէն աղայի գրադիրի» ի աննշան և անախորժ պիտակէն : Այս յուսադրիչ տեսակէտները՝ ապահովաբար իր արժանապատուութիւնը զգուցելով , բարոյապէս կը կազդուրէին զինքը , ինչ որ կը զգար հիմա՝ ատենէ մը իվեր իր կորուսած զուարթութեանը վերադարձով :

Բոլոր այս ամէնէն , դրամատունի մը գնահատուած պաշտօնակալի հանդարտիկ կեանքին գործունէութիւնը միայն մնաց իբր ոչ-արհամար-

հելլի շրջանակի մը մէջ անցած դարձած յաջողութիւն : Եւ Արսէն շատ
մը տեսակէտներով շահեցաւ : Որովհետեւ վերջնապէս փրկուեցաւ : Բոլոր
այն խռովիչ տեսիլներէն ու մղձաւաճներէն, որոնք երկար ատեն զինքը
հալածած, իր առողջութիւնը խանգարած էին : Բարոյական ուժի ներար-
կումներուն հետ , — զորս Արսէնին կը պարտէր , — դրամին բարիք-
ները ազդելով իր հոգեկան-ֆիզիքականին , զինքը հիմէն նորոգեցին :
Ատոնք , իր հաշիւին , աւելի՛ հիմնական ու վճռական նպատակ մը բե-
րած էին քան զխառնութեան բոլոր հնարքները և փորձերը , որոնցմէ
օգտ'ւաւ մը չէր տեսած : Եւ իր հոգին ուրախութենէն ցնծաց այն օրը
երբ ի'նքն ալ զգաց իր մէջը՝ թմրած Զիզին յանկարծական զարթնումը :
Ու կատակի համար չէ՛ր որ , ամէն անգամ Արամին հանդիպելուն ,
ձեռքի ուժգին սեղմումէ մը հետքը , կ'ըսէր անոր շատ մը բաներու
հետ , յանկերգի մը պէս .

— « Դուն հիւանդութեանս Վիֆրոպը գտար , իր բարերար շինուկին
հետ մէկտեղ . . . »

[Վերջ]

ՄԻՀՐԱՆ ՌԻՂՈՒՐԵԱՆ

ՍԻՐՏԻՆ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆԸ

Փռած մարմնիս վրայ երբ նոցիները բազմանան ,
Բուներնուն մէջ պարփակած են ղեղերնեւ մոլեխաւն ,
Բեղմնաւորեմ երբոր հոն , անթիւ որդե , լի'ել այնքան ,
Որոնք կրծեն ցօտէն իմ սկզբներս ալ նեխած ,

Սղաւնիներ երբ ծնի հէ՛ք ուղեղս մահալի ,
Ու եղունգներս՝ ժանգափու . երակներու մէջ երբոր
Ըզգամ անյազ ծառերուն հիւք ծրծելը եւ կարմիր
Հարմուկներուն՝ արիւնէս շիւք շիւք խմելը բոլոր ,

Իմ աչքերէս հրափայլ իրենց վառքը առնելով ,
Կայծառերը երբ բոցեղ աղամանցի վերածուին ,
Եւ երբ վերը , իր սկիի կեփիւն մէջ սկիւրով ,
Հոգիս դատէ էակ մը , կապոյսին մէջ օղածին ,

Եւ երբ զանկրս ամէնուն զանկերուն պէս պարպուի ,
Խոռոչանայ , կարծրանայ . եւ երբ մօրս իսկ դիւրագգայ ,
Ոսկորներուս , ջիղերուս ու միսիս հետ անհոգի ,
Փոռոս , մաշած անխնի աննւան դէ՛գ մը դառնայ ,

Դազաղըս բա'ց այն ասէն եւ պրպտ' հոն , Տիկի'ն ,
Վստահ եմ'քէ հոգին թափ պիտի գտնես , սարսուռուն ,
Սնեղծ ու դեռ արիւնոս , սիրող սիրքս ճնշագին ,
Եւ որ պիտի բարախէ , մասիլ ծայրը դպչելուն :

JEAN RAMEAU

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՐԵԱՆ

ԼԵՌՆԵՐՈՒՆ ՄԷՋ

I

Ամստնային գիշեր մը՝ պատած է ձորը իր երկար ու սուռնոս ֆոդերուն մէջ . շեռան կողերուն վրայ կը մնան մշուշները . ու թխուրակ անկերը ա՛յնքան կը քանձառանան որ՝ ոչ մէկ նայուածք կրնայ հասնիչ մինչեւ ստոնամանիքները՝ որոնք սակողջ օրը կը իրապէսէն գիւղին վրայ՝ արեւէն ոսկեգոծ իրենց կատարներով :

II

Սակիւյն այս անկերէն անդին կը ձառագայթեն ոսկի վառ գոյներ ու կը ցուցնեն երանաւէտ դաշտավայր մը , որ կը նմանի ծովերուն մէջ կորսուած կղզեակի մը , երանաւէտ Աշպեանը՝ որ կը նմանի արծիւի մը՝ որ անկերը կը ձեղի , կամ նաւի մը՝ որ հեռուէն կը նշմարուի . կատարները ու ստոնամանիքները հեռո՛ւն կ'երկարին ու կը նմանին հսկայ պատերազմիկներու :

III

Նայեցե՛ք սա հեռաւոր հօտին՝ որ կ'ստաշանայ ձիւնին ձերմակութեան մէջէն . հեռուն կը կապուտնան ժայռերը : Հոս , այս խաղաղաւէտ դաշտավայրը իր մեծամոքեան մէջ կը պապղայ . սարօրինակ դաշտավայր մըն է , եւ անշի սարօրինակ էն իր քնակիչները , որոնք բոլոր մարդկային եակներէն քածնուած են ջրիվներով ու հեղեղներով :

Անոնց համար երկինքին կամարը անշի շա՛ն է ու Արեւը անշի՝ քարեքար : Կը տեսնե՛ք սա հովուուհին , որ լին լուսն է հոն վերը , փոփոխակի ողորդուած արեւին կարմիր շողերէն եւ կապոյտ ցոլացումներու սուռներէն :

IV

Կ'երագե՛ , կ'երագե՛ անսնուն եակի մը վրայ՝ որ զինքը տարաւ հեռո՛ւն , շատ հեռո՛ւն , դեպի Անծաւօրը . եւ հիմա զանգակներուն թրքոռումներուն տակ՝ իր մեծոռումները կը թոչսին դեպի մարը մեկող Արեւը ու կ'երթան ո՛վ գիտէ ո՛ւր . . . :

Գեղեցիկ օրերը այնքան կարճ են Աշպեաններուն մէջ ու ձիւնը այնքան մօտ է բուսականութիւններուն . ու քիչ ասեմէն պիտի իյնայ ձիւնը մարգերուն վրայ , իր ներմակ ծածկոցը տարածելով :

Ու դուն , աղջիկ , պիտի վերադառնաս բուսերիկին ու օջախին մօտիկը աշխատելու . եւ մինչ դուն պիտի հիւսես բուրդ ու կանեփ , քու նայուածքդ պիտի քայտի Աշպեաններուն ետին , մայրամուտի արեւուն սուռակներուն վրայ՝ որոնք պիտի մխիթարեն քեզ՝ ժգոյն ու ինքնուր ձկնեմ . . . :

ԱՆՏԱԼՈՒԶԵԱՆ ԵՐԳԵՐ*

Գարնան ջերմ և առաւուսան հեղձուցիչ երկար գիշերներուն , մինչ Սան-Ֆրանչիսկո հրապարակը և չրջակայ փողոցները կը խեղդուին խառն ի խառն ամբոխէ մը , որուն աղաղակները , քրքիջները , վիճարանութիւնները աւելի կը կենդանացնեն Սէվիլի գիշերը քան թէ ցերեկը , — հոն , վարը , խորհրդաւոր նեղ փողոցներուն մէջ , որոնք Սանթա-Գաբրիէ կոչւին , Հրեանոցի հնօրեայ արուարձանը կը կազմեն , ալ ժողովրդական շահնդներուն արձագանգը չի հասնիր : Եւ օտարականը , որ աղմուկէն խուսափելով , շուարած է հին ամայի թաղին մէջ , մերթ կանգ կ'առնէ , զարմացած : Բարթի մը խորքէն խաղաղ և դաղջ մթնոլորտի մը մէջ , անուշ նուագախաղութիւն մը [mélodie] մը ծայր կուտայ . մեղանուշ երգ մը , հիւանդագին ողբի մը պէս անուժ : Հեծեծանքը կը սաստկանայ , վշտօրէն կը բարձրանայ , սարսուցող կողկաղանքի մը փոխուելով . յետոյ կը խաղաղի , կը քնանայ դաշն ու որոտ , կը մարի իրիկուան հանդարտութեան մէջ : Անտալուզեան երգին նախերգանքն է աս , Սալիսան : Ամէն ինչ կը լռէ : Լորամարգի մը կտրուկ ճիչ մը կ'արձակէ իր վանդակէն , միակերպ : Յանկարծ , ողբական և անհղ , երգ մը կը ժայթքէ : Կնոջական եռանդուն ձայն մը , իր պիլիկ թրթռացումներով կ'ողեկոյէ տենդը յիմար կիրքերուն , անէծքը մասնուած սէրերուն , թեւատուած անմեղութիւններուն :

Եւ ձալակեցի մոխիրը սիրոյ կրակին :

Երգը դադրած կը թուի : Ամէն ինչ վերջացած է : Բայց քիչ ատենէն , ձայնը վերստին կը հնչէ : Հիմա մեղամաղձոտ մեղեղի մըն է ան , նման անոնց , որոնք կը վժվժան , իրիկունը , Ափրիկեան բանակատեղիներուն մէջ , երբ կարաւանները հանգիստ կ'առնեն , դանդաղ մե-

[*] Փրանսերէն հանդէս մը իր վերջին բիւերէն մէկուն մէջ հրատարակած էր սպանիական զմայելի մէկ գաւառին՝ Անսալուգիայի սիւսոնչոր մանկամարդունքներուն շէնոզ , արձանիկ եւ զգացումի արտայայտութեան տեսիլէտով քիչ մը ծիծաղելի երգեր եւ ժողովրդային պարերգներ , խղմիտէն հաւաքուած Սպանիացի բնակչակ գրողի մը՝ Հասսէի կողմէ , որ յաջողած է խոր քափանցումով վեր հանել այդ ոսկեղինիկ բանակներուն եւ կրօն տաղերուն բառն իմաստը , արտայայտութեան գունագեղութիւնը եւ զգայովար հոգեբանութիւնը : Այդ երգերուն գեղեցկութիւնը ան է որ իրապէս կը խնայէ խորհրդապատեխառնուած մը եւ Մաւրիսանիայի վայնչական կեանքին դրուագներ : Հասսէ հեղինակն քափանցելով Անսալուգիայիներուն հոգեկան կիրքերուն , պատկերացուցած է զանոնք գեղեցիկ ուսումնասիրութեան մը մէջ , զոր կը կարծենք հանոյք մը պատկառելի հայերէնի վերածելով :

ԼԵՒՈՆ ԷՍԱՋԱՆԵԱՆ

ղեղի մը , ամառուան երկար թմբերէն , արեւակէզ , լայն անխառ զաշ-
տաղեաթիններուն տիրաւելի ձանձրոյթովը տողորուած .

Ան որ սերէն կը տոյրուի ,
Իսկապէս սիրէն է .
Իր սիրտը յամաբար կը ցամփի
Բայց չպատկեր վիշտը մեկուն :

Երբեմն խօսքերը ծաղրելի կը դառնան .

Դեմֆիդ աչկերը գեղահմայ
Ամբողջ հարստութիւն մը արժեցին ինծի ,
Եւ պիտի ծախէի զանոնք հիմա
Երեւակ ուզէիմ տալ ինծի նորէն :

Երեւ կ'ըղմաս որ քեզ սիրեմ
Խնկեմիս՝ հոսաւեփեմ ,
Քեզ փրկելու համար բոյրէն
Գու առջինեկ սերերուդ :

Թող անոնք խնդան կամ ստրուան, դառն ու քաջոտ , հեղնոտ կամ
կարեկցոտ, Անտալուզեան բանաստեղծութիւնները միշտ պզտիկ
խաղի մը վրայ ձեւած են իրենց միակերպ կողկողանքը , որովհե-
տեւ այս ժողովուրդին հոգիին խորը կուլայ յաւիտենական մեղամաղ-
ձութիւն մը : Իր ծաղկաւոր աղջիկներուն խիստ հնչալիւր ծիծաղը ,
իր երիտաւարդներուն աղմկալից մեծ քրքիշը գինեաւուններու դուռէն ,
ծիծաղ մըն է անդամական , ծիծաղ մը բռնազրօսիկ : Իրենց արտաքինին
վրայ վայրոզ գուարթութիւնը յուպոսմն է լոկ իրենց չլացուցիչ արեւ-
ւէն , իրենց այնքան ավնածիր լազուարթ երկինքէն , իրենց ճերմակ ,
վարդագոյն և կանաչ տուններէն , իրենց միշտ ծաղկաւետ պարտէզ-
ներէն : — Անոնք ատոր մէջ իսկ չունին ճառագայթող պայծառու-
թիւնը , ներքին ուրախութիւնը , որ կ'արիագնէ և կը մխիթարէ :
Այս մեղամաղձոտ չեղտերը իրենց ողբերգով կու գան Անտալուզեան
ամբողջ կեանքը օրօրել : Օրիորդին մօտ մօր կողմէն երգումները ,
նորածինին ճիչերը կը հանգարտեցնեն .

Վարդեմիներուն վարդը .
Քնանալ կ'երբայ .
Իմ սիրունիկս ինձնայ կ'երբայ ,
Անոր համար որ ուշ է ասեմը :

Երբ տղեկը չափահաս կ'ըլլայ , մայրերը անոնց սիրոյ առաջին թո-
թովումներուն կ'ընկերակցին , ծաղկազարդ պատուհանին տակ , ուր
ան կը սպասէ սիրականին .

Երեկ անցներով մարտդ մեքեն
Պատուհանը տեսայ քեզ .
Երբ մարդիկ նային երկինքին , ինչպէս
Աստուածային գեղը կը տեսնեն :

Եւ այս տարփալիր զգացումներուն կանխագուշակութիւններուն մէջ է որ Անտաղուզեան ժողովրդային բանաստեղծութիւնը կը մայթ քէ իր պատկերացումին ճոխութիւնը , իր բոլոր գունագեղութեան փաթթամութիւնը : Արեւելեան երգերու յատուկ այս միանուագ մեղեդիներուն վրայ՝ կը պարփակուի աշխարհ մը քննարկներու , մեղեդիներու և երգումներու : Ատիկա reguiebrosներով կը սկսի . դեռստի մարդու մը կողմէ՝ իր ճախուն վրայ հանգիպած անձանօթ մանկամարդուն հիւ մը անցքին նետուած ծաղիկներ են ասոնք .

Մասերդ երկու սգնուազարժ արմաւներ ևն ,
Ջեմֆերդ ալ երկու շուշաններ ,
Շրքունիքերդ ամենամաքիժ բուսեր ,
Ակաւներդ քնիկի մարգարիտներ :

Կիներու եղած հալածանքն է սա ճամբուն մէջ . հծծալիր խօսուող-տուքներ են , ևկեղեցիին կամ թաթրոնին մէջ , մայրիկէն դադանի , որ բարեյօժար՝ չի լսեր ու հանձնէր երբեք : Պատուհանէն ժամագրութիւններ են ասոնք , ուր՝ սիրոյ զբաւականներ կ'աղերսուին .

Սա քաշկիւնակիւն մեջ քանի մը արցունք
Նեօճէ՝ ինձի , սիրուն տղայ ,
Ես զանոնք կրնամս պիտի տանի
Գոհարագործի մը ընդերգեղ տալու :

Եւ վերջապէս , բոցակէզ յայտարարութիւն մըն է սա .

Արեւանունիքերդ , ամենասիրելիս ,
Նրման ևն զնդասեղի խորհերուն .
Եւ ամեն անգամ որ ինձի կը նայիս ,
Զանոնք հոգիս կը մխտա դուն :

Այսպէս կը թաւալի անվերջանալի նուազը տարփանքի զգայնու-թիւններուն , որոնք կասկածի կը փոխուին , մոլեգնութիւնով վեր-ջանալու համար .

Պիտի խելս քարերդ քու ճամբորդ
Զայն աւագով պիտի ծածկեմ ,
Ճանկնայր համար հեփք քայլերուն
Անոնք որոնք կը քափառին պատահանիդ շուրջը :

Ես աղբիւրէ մը ստուեր ուզեցի ,
Ու ձիւքնիկէ մըն ալ քիչ մը ջուր ուզեցի .
Ինչ որդիդ շրջեց իմ գրուիս այնքան
Ու լեւ գիտեր քե ինչ կ'ըսեմ :

Գարունը անցած է , ծիծաղները և սէրի ա՛ռչ մաղթանքները լուծ են : Ընդունը կ'արթննայ և հիմա իր վշտակիւր դեղձնիկը (strophe)՝ կը հէքեթթեն տառապանքները , թշուառութիւնը , հիւանդ անոցին սոս-կումը , գերեզմաննոցին ա՛ն ու դողը :

Ես հիւանդանոց կ'երթամ .
Ցանուն Աստուծոյ ,
Զիս մի չիւր
Միկնելու ժամը մահուան :

Պարզ , աննենգ տաղեր , կը վերակոչեն գերագոյն ծէսերը զորս
Անտալուզեան սովորոյթը նուիրագործած է . նախ քօղը որով կը ծած-
կեն մեռնողին գլուխը .

Երբոր ես մեռնիմ ,
Ո՞վ սիրասուն մայրս ,
Վիզիդ քաշկիմակով
Ծածկե իմ դիմքս . . .

Յետոյ հանգոյցը որով կը զօղեն իր խաչածնուած ձեռքերը .

Երբ ես մեռնիմ , մի մոռնար
Քու մագերուդ հիւսիսեով ,
Իրար միացած մեռներս կապելու :

Զմեռուան արեւին տակ , Անտալուզիան կը վերափոփոզի : Կերա-
կի մըն է . վարը , դէպի բլուրները , ուր արարական գիւղի մը պէս
ձերմակ , Գամթէլիձան կը շողայ մթագոյն ձիթենիներու մէջտեղ , ուր
Ազնալ Պարաշի Սան Ժուան մատուսը իր սիլուէթը կը ցցէ մաւրիտա-
նական հին դղեակին աւերակներուն վրայ , ձեմասէրները կը ցրուին
դաշտագետինին մէջ , տաքէն ու փոփոզումէն հեւալով : Երկաթուղիի
կողին սառերին տակ , կիներու և աղջիկներու հօյլը կանգ կ'առնէ :
Սեւաթոյր մեծ շաշերնին գետնին վրայ տարածելէն և նպարեղէններով
ակաղձուն կողմները գետին դնելէն հետքը , չուրջանակի կը նստին
և կը շատախօսեն բարձրաձայն , ցնծուն ու շոնգալից : Յանկարծ ,
անոնցմէ երկուքը ոտքի կ'ելլեն Բանրիոնները (castagnettes) կը շաչեն
ձեռքերնուն մէջ , նախերգելով դալիք պարը : Եւ մինչ պարահինները
դիրար կը հալածեն և կը փախփախեն , ճաղուկ դարձպարի մը մէջ ձեռք
կուտան իրարու , սիրուն փախուստով մը , կիսաչրջանակաձև կկզոզ
ընկերներուն բերնէն՝ հրաշալի se villasներու և seguidillasներու նուագա-
կից թեթեւ խաղերը դուրս կ'ելլեն վճիռ ու հնչեղ .

Թեպէրքեիս նշանածը—օ՛ , հէ՛յ ,
Թաշկիմակ մը ունի . . .

Կարճ և կցկտուր է դաշնակութիւնը : Թէև զեղուն մեղամաղ-
ձութիւնով մը , բայց աւելի եռանդուն են , աւելի կայտառուն՝ քան Անտա-
լուզեան միւս երգերը : Ատանք են որ թմբուկներու ձայնով կը տիրա-
պետեն տօնախմբութիւններուն մէջ : Այն ատեն բանրիոնները կը լսեն :
Միայն ձեռքի շաչերը , ցամաքօրէն դաշնաւորուած , արեւելեան պարին
չափը կը համբոյն մասններով : Աւելի հեռուէն , երբ բլրակներուն կը
մօտեցուի , դաշտերուն մէջ կը բարձրանան ventasներ , պղաթիլ դինե-
տուններ [guinguettes] ձերմակ կամ բաց կապոյտով ներկուած ձերմակ
փայտակերտ սեղաններուն շուրջը՝ որոնց վրայ դաւաթներ և շիշեր
արեւին տակ կը փախիլին , Գորտուանեան լայնշի փեղոյրներով ծած-

կուտ՝ յըջողէմ մարդիկներ , կիներ՝ սեւ մաղերնին ձմրան վարդով մը պնտուած՝ կը խմեն Սան-Լիսքարի ոսկեգոյն գինին : Ու կիթառներու խուլ աղմուկին և malaguenasներու սուր խաղերուն մէջտեղ , soleares-ներու քաշքշուող ողբովը մասնաւոր երգ մը ծայր կու տայ , օրօրի մը պէս քնածու , մանկական խօսքերով օրօր մը , միակերպ մեղեդիով : Օրօրոցին երգն է ան , երգուած միմամած և մեծաչուր մանկամարդ աղջիկներու ձայնովը , կախորբանին օրօրումին տակ , ձմրան աղուոր օրերու զաղջ հովին գէմ , իրենց վարդագոյն , կապոյտ նախշուն հագուստները ծփացնելով : Աւանց օրօրոցի venta չկայ , աւանց երգի օրօրոց չկայ . և , Անտալուզեան լայնարձակ դաշտագետինին լուսթեան մէջ , միշտ կը հաակաին , հեռաւոր թէ մօտաւոր , օրերգի մը նօթերը :

Աւագ Հինգչարթիի գիշերն է : Թմուկի կտրուկ և չոր թնդերնները կը մօտենան , ամբոխին աղմուկին վրայ արելով . . . : Հեռուէն ձիաւորի փողահարութիւններ կը հնչեն : Զրավաճառները և վարձու աթոռատուները իրենց աւանդական ազազակները կ'արձակեն . Agua fresca — քաւմ ջուր . . . Asiento barato — արքունսեցեք . . . : Լիալուսինը կ'արձախաղօժէ Մայր Եկեղեցիին կամարանկիւնները և ժիւալտաի արաբազարդերը , որոնց ուրուանկարը աղօտօրէն կ'ընդելուզուի լուսաւորներով բնուած խաւարչին երկինքին վրայ : Զահրու ըոցերը լուսաւոր հեռքեր կը ցանցնեն ամբոխին խաւարամած զանգուածին վրայ , որ կը ճեղքուի , և ապաշխարողները կ'առաջանան , խորհրդաղգեացի դիմակաւոր , կոնաձեւ երկար capuchonներու տակ , իրենց մանիշակագոյն , ճերմակ կամ սեւ երկար չըջաղգեանները հողին վրայ ընդ քարշ քսելով : Վարը , Լօս Բալօսի դուռէն , Բասօսները [Pasos] դուրս կ'ելլեն , անթիւ մօմերու շողակնայեւ փաղիին մէջ : Անոնք սալաքարերուն վրայ սահելէն յամբարար կ'առաջացնեն անյիշատակ ժամանակներէ ի վեր յարգուած սրբազան Պատկերները , — մաղձատեսիլ Բրիստոսը , դառնակսկիծ ու տառապալից դիմադիծերուն վրայ երեք միօթիք ճառագայթներ ցցուած . կ'առաջացնեն պերճաշուք կոյսերը , գոհարներով պսակուած , գրեթէ ոսկեհուռ , թանկարժէք և ծանր մեկնոցներով բանուանդուած , վաղեմի կուռքերու նման իրենց փառքին մէջ կանգնադեղ :

[Յաջորդով]

ՀԱՍՍԷ

“ ՄԱՍԻՍ ” Ի

ԳՐԱԿԱՆ ՊԱՐԳԵՒԱՒՈՐ ՄԻՅՈՒՄԵՆ [Տեսնել Թիւ 36 և 38] մասնակցելու պատրաստողներէ դիտել տրուելով որ իրենց գրուածքները զաւառէն հասցնելու համար պայմանաւորը քիչ է , որոշած ենք Միջոմին պայմանաւորը երկարել մինչև Դեկտ. 15 [Թ.] որմէ ետքը անընդունելի պիտի ըլլայ ո՛ր և է գրուածք : Արդիւնը պիտի ծանուցանենք Դեկտ. 20ին :

ԱՆՅԱՌՈՒՆ ԹԻՒ ՄԸ պիտի հրատարակենք մօտաւորապէս , ստուարածաւալ ու ճոխ բովանդակութիւնով , ուր պիտի երեւան մեծ մասը մեր բազմաթիւ աշխատակիցներուն **ՊԱՐԳԵՒԸ** , յատկացուած առաջիկայ տարւան նոր բաժանորդներուն , մեծապէս հրապուրիչ ու արժէքաւոր , պիտի ծանուցանենք մօտաւոր Թիւով մը :

Մասիսի նախկին օրոմնի խմբագրացեսը՝ Տիգրան Արփիարեան, որուն Գամէր ծածկանունով սիրուն Գրոնիկները մեծ հանոյնով կը կարգացունէն եւ արձափն փնտել կու տան իր գրիչը, սիրուն անակնկալ մը կ'ընէ, մեզի դիմելով նամակաձեւ հետեւեալ գրածով. — Եղբայրս, ես քեզի քեզիս իր հրապարակիչ արձակովը, — որուն կը կցէ Բերբաւած մը, — անմեռ ու արտառնչ նիւթ մը խաւացնող, Առօրեայի շուրջով : Գամէր խմբագրական դարձուածով մը զայն կը վերագրէ սիրովոյ գրիչի մը : Մեզի ու ընկերացիներուն կը մնայ ալ որոշել թէ՛ նամակագրութեան սիրտաօջառ բանաստեղծի՞ մը Բերբաւածն է ան, թէ՛ արձագանգը եւ գրի բարբառամեծերուն թարիքը առած նամակագիր գրագէտին, որ «Առաջին Մեր»-ին շուրջովն է ունեցած իր ալեւոր սիրտին մէջ, — ներմակ մոխրիին տակ պղպտակով աղօս կայծ, — եւ որ կը բաւուի ստորագրելու իր բաւական խառնովը : Իր խորհուրդի ֆոյլին մէջ ողջունելով «Առաջին Մեր»-ը եւ անոր հեղինակը Մասիսում, աւելցնենք թէ՛ Գամէր հանոյնը պիտի ապրէ մեզի եւ մեր ընկերացիներուն, ասկէ ետքը աշխատակցելու Մասիսին :

ՍԿՍՆԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

Սիրելի Տօրէն-խմբագրապետ Մասիսի :

Ուշադիր եւ համակիր հետեւող մը Ձեր Մասիսին, կը դիտեմ որ նախանձախնդիր գրագետի ու խղճախոս խմբագրի հոգածութեամբ կը զբաղիք սկսնակ բանաստեղծներու ոտանաւորներովը, — մինչ ուրիշներ կ'արհամարհեն զանոնք, — երբեմն քննադատելով եւ երբեմն գնահատական ծանօթութեամբ մը հրատարակելով : Հինուց ի վեր պաշտպանած մէկ սկզբունքիս գործադրութիւնը եւ կիրարկումը ըլլալով ասիկա, խնդակցութիւնս կը յայտնեմ : Այո՛, պէտք չէ անտեսել այդ լուս, սիրամոլ կամ զրատէր հոգիները : Կէտք է տալերգութեան ուղիղ կամեմունքը յոյս տալ ու քաջալերել զանոնք : Իմ հրապարակագիրի համեստ գործունէութեան միջոցին, ուշադրութեամբ մեծագոյն աւարկան դարձուցած եմ շարունակ այս տեսակէտը, զէ՛ծ գաղափարի տեսակէտով : Յաճախ, ապագայ խոստացող պատանիներ կը զանաւն գրիչի նախափորձեր զրոյցներուն մէջ, հոս թէ գուռաք, աղքատ թէ հարուստ Այս վերջիններէն էր Դրիգոր Է. Մ. Յակոբեան, որ իր փոքրիկ հոտակէն, արձակի՛ մահաւանդ ոտանաւորի նախափորձեր ըրաւ հին Արեւիկներուն, Բիւզանդիոնին, պահ մըն ալ Մասիսին մէջ, ծածկանտով : Ամէնքս ալ համակրանքով ողջունած էինք զինքը, ո՛չ թէ իր ընկերային բարեկեցիկ դիրքին պատճառով, — թէ լա՛ւ կ'ըլլար որ մաշած օձիքով բեր. Թողներու շարքին վրայ աւելնալ՝ mondain բանաստեղծներու սերունդ մըն ալ, — այլ որովհետեւ ճշմարիտ բանաստեղծի մը étoffe ունէր : Դժբախտաբար, չի շարունակեց, իր առեւտրական զբաղումները մէկ կողմէն, բարեյիշատակ հօրը մահէն ետքը՝ սեղանաւորական գործին ալ զլուխ անցնիլը եւ chef de famille ըլլալու լուրջ պարտքան միւս կողմէն՝ արգելք ըլլալով . եւ յետոյ . . . սիրտի խնդիրներու մէջ շատ դժուարութիւն . . . չի քաշելու առաւելութիւնը՝ Թերեւս, իր հարուստ երիտասարդի դիրքին բերումով . որով հոգեկան տառապանք չէր ունենար ու չէր ալ ներշնչուեր : Առանց վիշտի՛ բանաստեղծութիւն կ'ըլլա՞յ : Արիւսաւանը մի՛ հաշուէք. ա՛ն բայտութիւն է, հեղինակի ու զուարթութեան բերնոյն է ան : Լսեցի՞ք, à propos, որ Փանոսեանին բոլոր բանաստեղծութիւնները, տպուած ու անտիպ, տառնձին հատորով մը հրատարակելու ձեռնարկած է Մանգուսէի Տօրէնը : Անա ձեզի հասնելի լուր մը զրական աշխարհէն : Յաւանդուած բան մը ըսած պիտի ըլլայի՛ եթէ յիշէի այս առթիւ, թէ իրենց առաջին ձեռագիր ոտանաւորը ստանալուս, որքա՛ն խրախուսիչ տողերով հրատարակած եւ մտերմական նամակներ ուղղած եմ որ շարունակէն գրել՝ Վարդգէսին, Հրանտ Նազարեանին, Միսաք Մեծարեւելին, Մերութան Պարտմեանին . փայլակէն ու վաղամեռիկ

Կարապետ Ոսկեանին: Բայց երկար պիտի ըլլար վերադառնալ այդ մասերական կեանքի յիշատակներուն: Եթէ այսքան մին ալ ըսի, սիրելի՛ պաշտօնակիցս, առիթը ներկայանալուն համար էր զոր պէ՛տ չեղանէմ հիմա: Երեկ զիշեր, ձանձրոյթի մէկ վայրկեանիս, հին Թուրքերս խառնշուկեալս, աչքիս նսնդիպեցաւ վեց տարի առաջ խնձի զրկուած ոտանաւորի մը ձեռագիրը զոր չեմ գիտեր ինչո՞ւ չեմ հրատարակած տտենին: Ամէն պարագայի մէջ, իրաւական յաջող գրուածք մըն է, տխուր ու մեղամաղձոտ, —մերժուած, չի համապատասխանուած սիրող յախտեանական պատմութիւնը: Միևսի, այս ոտանաւորին հեղինակը սա բացառիկ հանգամանքը կը ներկայացնէ, որ երիտաւարդ մը չէ, —ինչպէս կ'երեւայ իր գրուածքէն, —Թէև բանաստեղծութեան մէջ դեռ նոր ու սկսնակ, —այլ տարեց անձ մը, —որ նորածագ սէր մը կը զգայ իր ա՛յ տկար կերպով բարբառող սիրտին մէջ, մանկամարդ ու անուշ աղջկան մը վրայ: Պարագան բաւական հետաքրքրական է՝ ոտանաւորի նիւթի մը համար, ու հոգեբանական՝ զգացումներու արտայայտութեան տեսակետով:

Ձեզի կը դրկեմ զայն, կարգացէ՛ր և եթէ հունիք՝ հրատարակեցէք Մասիսին մէջ, չի մոռնալով սակայն կցել անոր՝ խմբագրութեանդ կարծիքը և դիտողութիւնները: Մարդը քիչ մըն ալ աղքատ կ'երեւայ, իր ձեռագիրին Թուրքէն ու պահարանին բարակութենէն դատելով: և եթէ այսքան տարի ետքը յանկարծ աչքին զարնէ, իր նիւթական մէկ տառապանքի պատճառ, հոգեկան տառապանքին յիշատակը, ի՞նչ sensation պիտի ունենայ արդեօք:

Սիրով ձեռքերնիդ կը սեղմեմ և յաջողութիւն կը մաղթեմ Ձեր գրական-լրագրական այս զեղեցիկ ձեռնարկին, յարատեւ ու երկ պահելու համար Պոլսահայերու այս երիցագոյն Թերթը:

Զերդ

ԳԻՍԵՐ

ԼՈՒՌ ԷՔՐ

Օր. Խ. Ծ. ԻԳ

Լուռ, գեհնաւած, շուփող առջև,
Չեմ կրնար շառ մը քրքռել,
Ո՛ր իմ մընած կեանքիս արեւ,
Նշուազեղ՝ քայց . . . սիրազեղ:

Զի մազերուս հետ ձերմկոյ
Ինչպէ՛ս կ'ուզես ներդաշնակել
Քու խոսքովներդ խառնեալ, զնցող,
Ճակչիս խորշումն ինչպէ՛ս ծածկել:

Ու Միւսիկն պէս կը գոչեմ.
«Եկո՛ւր աղուոր Մուսսս խիւն,
«Բաց քեւերով քե՛զ կը սպասեմ,
«Ա՛հ, ի՛մս կոյր բոլորովիւն»:

Ի՛նչ ալ աղուոր կուշ խնդրով
Դեմ կ'ընդլզիս՝ իմ խնդրակիս,
Ու հեռանաւ՝ շուռ անմոլողով,
Սիրող խուշ ծա՛րս մըն է, հոգիս:

Եւ ստուերս զոր կը գծեմ
Շրջագեղեսիդ ծալքերն քերեւ,
Սեւ շուփ մըն ալ կ'աւելցնեմ
Կեանքիս վրայ ա՛յ անարեւ:

Լուռ, գլխիկոր կը հետեւիմ,
Քու հեռացող աղուոր շուփող,
Քղանցկներուդ հաւասարիմ,
Աւագիւն վրայ անեւս հուրիդ:

Օր մը Լուրի՛ն այս ծառուղիին
Պիտի մէկեղ քերե՛ գնեզ,
Օ՛հ, ի՛մ ուզեր ու աշունին
Հանդիպի ծառն այդ արտակեզ:

Եւ գուցէ շառ մը շրքերեղ
Ելլէ այգուն զեփիւնիս պէս,
Թեթեւ, մեղմիկ ու օտարաւեօ
Որուն ըլլամ եւ ողբակեզ:

ԵԴՈՒՍԱՐԴ

ՊՈԼԻՍԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻՆ

ԳԵՐԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ

Բ.

Ե.—ԲՆ ԵՆ ՈՐՈՇԻՅ յօդերուն , կը ի
եւ մը ի գործածութիւնները . — Աշխար-
հաբարի մէջ որոշիչ յօդը ը գրին է : Եւ գիրը
բացառաբար միայն իբր որոշիչ յօդ կը գոր-
ծածուի հետեւեալ պարագաներուն մէջ .

1.—Ձայնաւորով կամ անձայն յով վեր-
ջացող բառերուն ծայրը , օրինակ , զինիին ,
մարդուն , սիրոյն և այլն :

2.—Էական բային սահ . ներկայ և ան-
կատար եղանակներէն առաջ . օրինակ , այս
մարդն է , այն գիրքերն են կամ էին և այլն :

3.—Այլ [նաեւ] շարկապէն անմիջապէս
առաջ . օրինակ , քոյն ալ , եղբայրն ալ
և այլն : Այլ [այլ ևս] մակրապէն առաջ սո-
վորական ը յօդը կը դրուի . օրինակ , այս-
չափը ալ թող բաւական համարուի :

Կըն կը գործածուի բայերու հաստա-
տական ձեւին սահ . ներկայ և անկատար
եղանակներուն հետ կարգ մը բայեր սակայն
առանց կը ի կը խոնարհուին , ինչպէս եւ
ունիւմ , կամ , կրնամ , զիտեմ և այլն : Միա-
վանի բայերուն առջև կըն կըն ի կը փոխ-
ուի և կ'ըլլայ կու տամ , կու գայի , կու լայ .
[փոխանակ կը տայ , կը գամ , կը լայի] :
Կուն պէտք է կը ի պէս բային անշատ գրել
և ոչ թէ բային կցել , ինչպէս շատեր սխալ
կերպով կը գրեն կուտամ , կուգայի , կուլար
և այլն : Երբ կը ին յաջորդող բայը ձայնա-
ւորով սկսի , կը ին ը կը ջնջուի և տեղը
['] կը դրուի , ինչպէս , կ'ուտեմ , կ'ատէ ,
կ'երթայի և այլն : Լուսագոյն է , մեր կար-
ծիքով , նմանապէս կը ին ը կը ջնջել և տեղը
['] գրել ձայնաւորի պէս հնչող բաղաձայն-
ներու առջև , ինչպէս . կ'սկսի , կ'ըրօսնում ,
կ'զգաք , և այլն : Մը անորոշ ածականին
ը կ'ոչ մէկ պարագայի մէջ կը ջնջուի :
Անիկա միշտ անփոփոխ կերպով պէտք է գրել :
Միայն երբ անոր անմիջապէս յաջորդէ էա-
կան բային սահ . ներկայ և անկատար եղա-
նակներուն որ և է մէկ գեմբը , կամ ալ շար-
կապ , այն ստեն մը ին և անոնց մէջտեղը
քաղցրահնչական և գիրը կ'աւելցուի . ինչ-

պէս , մը և է , մը և ալ , որ արդի գրողնե-
րուն գրեթէ ամէնքն ալ մըն է , մըն ալ ձեռով
կը գրեն : Մեր կարծիքով ճիշդ չէ սակայն այս
ձեւը , նախ անոր համար որ ժողովուրդը
չ'արտասաներ մըն ալ , մըն է , այլ մը նալ ,
մը նէ : Ետոյ բերականապէս ալ անհա-
կնալի է քաղցրահնչական և գիրը մը ին փակ-
ցնել : Իհնչ պիտի նշանակէր մըն ինքն իրեն
մնացածատեն : Մենք աւելի ճիշդ կը գտնենք
կամ գրել մը-և-ալ , ինչպէս ֆրանսացին կը
գրէ a-t-il ? և կամ գոնէ մը ն-ալ գրել ,
որմէ բացայայտ կ'երեւայ որ այս և մը ն-է
գիրը ոչ մը անորոշ ածականին է , ոչ ալական
բային կամ ալ շարկապէն , այլ անոնց եր-
կուքին մէջտեղը մտած քաղցրահնչական տառ
մը : Այլ մակրապէս առաջ քաղցրահնչական
և գիրը չը գրուի . օրինակ , մարդ մը ալ
սակէ մեծ գոհողութիւններ չը կրնար ընել :
Լուսագոյն կ'ըլլայ ալ [այլ ևս] մակրապը
[']ով ալ գրել , զատեւել համար ալ [նաեւ]
շարկապէն :

Հիմակահիմա հոս կը վերջացնենք Պո-
լիսի աշխարհաբարին դէմ գործուած անհա-
րազատութիւններուն , անճշդութիւններուն
մասին մեր զիտողութիւնները : Կը մնայ տա-
կաւին ճշդել շնորհիւ , շնորհով , շնորհքով ,
նկատմամբ , նկատումով , հրապարակաւ , հրա-
պարակով , հրապարակային , միայն , մի մի-
այն , միմեկ , Թերութիւն , Թերութիւն ևն .
սխալ կերպով իրարու տեղ գործածուած բա-
ռերու իմաստը և անոնց գործածուած տե-
ղը ու եղանակը : Ասոր ձեռնարկելէ առաջ
սակայն , պիտի փախաքէինք որ մինչև հիմա
մեր յայտնած կարծիքներէն տարբեր կարծիք
ունեցող հեղինակաւոր գրագէտները և բերա-
կանները հաճէին իրենց տեսութիւնները
պարզել հրապարակաւ , որպէս զի կարծիք-
ներու անկեղծ , լուրջ փոխանակութիւնով մը
կարելի ըլլար վերջ տալ այսօրուան գրուած
լեզուին մէջ տիրապետող անօրինակ անմիա-
կերպութեան :

ԱՐԲՆԱԿ ԻՆՃԵՆԱՆ

[Փաստաբան]

Ստացանք Զարդարեան Գրատունէն Պար-
ազ , նշեցող մը բարոյական և գործնա-
կան գաստիարակութեան , հեղինակութիւն
Տիկին Փ. Հազարապետեանի :

Հիմնադիր Կ. Ս. ԻԻԹԻՆՃԵԱՆ : Արտօնատէր ՏՊԳՓ. Ե. ՄԱՍԻՍ Տպագր. ՃԻՃԱՆ :

Առշաղոյսի Պոլիսի գործակալն է «Օսմանլը» Գրաստանին Տէր Տիար
Յովնանէս Աղնաօր , Պապը-Ալի Ճատաէսի , թիւ 56 :

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒՆ

Հեղինակներէ և հրատարակիչներէ մեծնք՝ որ կը բաղձան Մասիսի
մէջ ծանուցաւորի իրենց հրատարակութեան , պէտք չէ մտնան մեր
պայմանը թէ , 2 օրինակ զրկուած գիրքերը միայն նկատուլովեան
կ'առնուին և կը ծանուցուին :

ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹ նագաչին , գրական և քաղաքական . - Բա-
ժանորդագրութիւնն Կ. Պոլսոյ համար՝ տարեկան 80, վեցամսեայ 45
գրչ. , զատաներու համար՝ տարեկան 108 գրչ. , վեցամսեայ 60 գրչ.
և օտար երկիրներու համար՝ տարեկան 35 ֆր. , վեցամսեայ 20
ֆր. : Զեռքէ վաճառում՝ սառը փառա : **ԱՐԵՒԵԼՔ** հրատարակ
կ'ելլի տէն օր , կէս օրին , ինամիալ բովանդակութեամբ , ըն-
տիր յօդաւորներով , թարգմանութիւններով ու նորագոյն տեղեկութիւններով :
ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմած խմբագրութեամբ և իր կարող աշխա-
տակիցներով առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին
մէջ , արմատացած բնիկ երգողներու քնահամայնքով , իր առաւելութիւններէն
մէկն է **ՊԵՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՐԻ** ըլլալու հանգամանքը , որով իր ընթերցողնե-
րուն կը ներկայացնէ պարբերաբար Մանթի Դէմքեր և երբեմն ալ տե-
սարաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մամուլական յօդուած-
ները , եկեղեցական , կրօնական , անտեսական-սեղանաւորական , եր-
կարող օրծական , իրաւաբանական և այլն , բացի գրական , բանասիրա-
կան զրուածքներէ , որոնք տեսութիւններէ են : **ԱՐԵՒԵԼՔ** վերաբերեալ
ամէն գրութիւն և բովանդակութիւն ուղղել Տէր և Տնօրէն Գառնգին
էֆ. Պոյաճեանի հասցէին , Ղալաթիա , Մահմուտէ Ճատաէսի , ուր կը
գտնուին թերթին Տպարանը և Խմբագրատունը :



Jeprends tous les jours
de la vraie
CREME DE MORUE
de la Ph^{ie} PEQUART de VERDUN-s/-Meuse
C'est très bon !!!
Petite mère, se méfie des produits
similaires ; mauvais et digérant mal.
Le Flacon : 3^{fr} 50 dans ttes Pharmies.
« SUPERIEURE à L'HUILE de FOIE de MORUE et aux EMULSIONS. »

Նշանաւոր Տոքթ. Բէքաուի
այս էմուլսիօնը կը գերա-
զանցէ հրատարակի վրայ
գտնուած բոլոր իր նմանե-
րը : Զուկի իւզի տեղ կը դոր-
ժածուի և անկէ աւելի
օգուտ ունի աղոց և տկար

անձերու : Միակ ներկայացուցիչ Թուրքիոյ . Ո. Սօլախեանց , Կ. Պոլիս :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹԵՍՄԵՆ կը դարձանէ ամէն տե-
սակ տկուայի և լինտի հիւանդութիւնները , ժառանգականները կը լեցնէ՝
առողջ տկուաներու պէս երկար առեն դժբաժանելու պայմանով :

ԲՈՂՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ, նուրբ , հաշակաւոր և զիմացկուն
արուեստական տկուաներ կը պատրաստէ , բնականին ճիշդ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարձանատան մէջ , Բերա , Մեծ
Բարձաք-Գարու , թիւ 8 : Կարօտ հիւանդները ձրի կը դարձանէ հի դ-
շարթի օրերը՝ Բերաի Ազգատախնամ դարմանատունին մէջ :

Կիրակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունի :

Մ Ա Ն Ձ Ո Ւ Մ Է Միակ անցաւ ան Հայաթներէր, կը հրատարակուի ար-
շի և արուարձաններու ամէն կողմը, բովանդակելով հետազոտներ, քա-
ղաքական, ներքին, եկեղեցական ու կրթական լուրեր, գրական, տն-
տեսական և բնկերալին յօդուածներ : Զօրեքշարքի և Հայաթ օրերը կը
հրատարակուի առանց ծանուցումի, չորրորդ էջը լատկայնելով առեւ-
տրական և գրական գրութեան : Գինն է 10 փարս : Տարեկան բա-
ժանորդագրութիւնն է Պոլիս՝ 80 դրչ., դաւա՝ 108, արատասձման՝ 25
ֆր. : Վեցամսեայ՝ Պոլիս՝ 50, դաւա՝ 60, արատասձման՝ 18 ֆր. : Ամէն
գրութիւն ուղղել Տէր և Տնօրէն Յովհաննէս Ֆ. Էֆ. Գայսէրեանի
հասցէին՝ 38, Պապը Ալի Ճատտէսի :

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ, ԱՏԱԲԱԶԱՐ

Հայունեայ Վարժարանի նպատակն է Հայ աղջիկներուն տալ լուրջ
գասալարակութիւն մը՝ զարգացած և բարեկիրթ տանտիկիներ և գա-
տիարակութեան գործին օժանդակներ պատրաստելու համար : Վարժա-
րանին տեսչութիւնը ոչակերտուհիներուն ֆիզիքական, իմացական և
բարոյական զարգացումը միշտ խղճամբա հոգածութեան առարկայ
կ'ընէ : Բնիկ և Ամերիկացի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուց-
չական խումբ մը կ'աւանդէ Հայ., Անգլ., Թուրք. և Ֆրանս. լեզուները,
ինչպէս նաեւ ընտանի, իմաստասիրական, չափական և ուրիշ գիտու-
թիւններ : Մնացուն կարուհի մը կ'աւանդէ ձեռագիտութեան, կարի և
ձեռագործի դասերը : Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ. ոսկի,
որուն կէսը պէտք է հատուցանել տարեչաջանին սկիզբը և կէսը Ծնունդ,
գի արձակուրդին : Դասնակի և երգեսնի համար կը պահանջուի 5, 3
և 2½ օսմ. ոսկի, դասաւարտեան թիւին համեմատ : Վարժարանին
յառաջիկայ տարեչաջանը կը սկսի Սեպտ. 11ին (Ն. Տ.), Դչ. իրիկունը
Աւելի տեղեկութեան համար խնդրել Վարժարանին Յայտադիրը կամ
գլխի Մր. Բիթի, Պայպը Հատտ, Կ. Պոլիս, կամ գրել Տօքթ. Ս. Էֆ.
Գալալձեանի, Ատենապետ Խնամակալութեան, Ատտեալար :

ՏՈՒՆԷՆ ՆԵՐՍ.—Հրապարակ ելաւ Բասմի այս աշխատա-
րութիւնը, որ կը պարունակէ ընտանեկան և բնկերական հարցերու
վրայ շահեկան և հետաքրքրաշարժ տեսութիւններ, ժողովրդական
ոճով : Բասմի գրեւակերպը արդէն ծանօթ բլլալով հանրութեան,
վատահօրէն անոր այս գործն ալ պիտի արժանանայ այն սիրալիր ըն-
դունելութեան, որով վարձատրուած են միշտ հեղինակին գրելի ար-
տաղրութիւնները : Գինը, խոտ ածան գրութեան է, որպէս զի ժողո-
վուրդին ամէն դասակարգին մատչելի ըլլայ : 3½ դրչ., 200 էջ ունե-
ցող այս գիրքին համար : Կը ծախուի բոլոր գրավաճառներուն քով :

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԼԵՂՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳԻՇԵՐՈՐԺԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ-

Կ. ՊՈԼԻՍ, ԳԱՏՐ-ԳԻՒՂ, ՄԷՕՆԻՐՏԱՐ ՆԱՏՏԷՍԻ,

ՅԻՂ ՏԱՐԽԵՐՉԱՆ

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, տոնմային ուսումներէ և գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգլերէն և Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօսելախորժութեամբ (բռաբիբ), ինչպէս նաեւ Գծադրութիւն, Տնարարութիւն, Կար ու Ձեւ, Ասեղնագործութեան զանազան տեսակները (ձեւքով և մեքենայով), ձայնական և գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Ջութակ: Գիշերօթիկները կը վայելեն կատարեալ սնունդ և ընտանեկան անիթերի խնամք, առողջապահիկ պայմաններու մէջ: Բանակցութեան համար դիմել վարժարան՝ Տեսուչին կամ Տեսչուհիին Մանրամասն տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ, Գշ. Եշ. Ծք. օրերը ժամը 5էն 9 զիմեզով «ԳԱՐՈՒՆ» Դրատունը, Մեծ Նօր խան, վերի յարկ, թիւ 55: Աշակերտուհիներու վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բշ. օր:

Հիմնադիր-Տնօրէն

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ԱՓՈՍԹՈԼԻՔ ԻՆՍԹԻԹԻԹ, ԳՈՆԵԱ

(ՃԵՆԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

Վարժարանիս առաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 13/26ին: Հաստատութիւնս կէտ նպատակի ունենալով գոլէճական ծրագրով մը բարձր և միանգամայն գործնական կրթութիւն մը տալ ուսանողներուն մասնագէտ դասատուներու միջոցաւ, կ'աւանդէ Օսմ. Հայ. Անգլ. Ֆրանս. և Յունարէն (Յոյն աշակերտներու համար) լեզուները, ինչպէս նաեւ ընական, ընտանեկան, ուսողական, փիլիսոփայական, իրաւագիտական և վաճառականական դիտութիւնները: Մեծ խնամք կը տանի աշակերտներու բարոյայան մաքրութեան և ֆիզիքական առողջութեան: Դպրոցական նոր տարուան համար ուսուցչական մարմինին վրայ աւելցած է նաեւ համալսարանական բժիշկ մը՝ որ պիտի դասախօսէ առողջապահական և ընական գիտութիւններ և ձրիապէս պիտի դարմանէ հիւանդացող աշակերտները, եթէ գտնուին: Գիշերօթիկնմու տարեթօշակն է 10 Օսմ. ոսկի, որուն կէսը վճարելի կանխիկ և ընտանեկան կէսը Ծնունդին: Մանրամասն տեղեկութեան համար դիմել Տնօրէն Տօքթ. Ա. Յ. Հայկազեանի, Գանիա:

“ՄԱՍԻՍ,,Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պալիսի և դաւառներու համար տարեկան 60 դրշ :
Արտատաճմանի » » 14 ֆրանք :
Թղթատարութեան ծախքը մեր վրայ :
Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգեւները ,
միշտ ձրիաբար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :
Մասին լաժանորդագրութիւնը բացարձակապէս կա խիկ է :
Զննատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր :
Նամակ կա՛ր որ և է գրութիւն ուղղել առ

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն

“ՄԱՍԻՍ,,Ի Հասցեով

Պապը Ալի Ղուսսէի , Թիւ 38

درعليه باب عالی جاده سنه نومه ۳۸ «مسیس» غزنه سی اداره خانه سی

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte

CONSTANTINOPLE

Ռ Օ Պ Է Ր Դ Գ Օ Լ Է Ճ Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 5/18ին : Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բաղձացուած կատարելութեամբ ստանդելու համար : Վարժարանիս մասնաւոր բժիշկը՝ ուսանողներուն առողջութեան, մարմնամարզներուն և խաղերուն , խնչպէս նաեւ վարժարանիս ընդհանուր առողջական վիճակին վրայ կը հսկէ : Մարմնամարզի նոր և գեղեցիկ չէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարզի ամէն տեսակ գործիքներ, վերջին դրութեանց համաձայն :

“ՄԱՍԻՍ”ի վեցամսեայ Շրջանի հաւաքածոն , որ 550 էջէ բաղկացած գրական գեղեցիկ հասոյ մը կը կազմէ , իրնայ ստացուիլ իմբագրութենէս , կանխիկ փոխարժէքով՝ 30 դրշ . կազմուած 35 : Թղթատարով դրկուելիք Հասոյներու համար պէ՛տ է 5 դրշ. աւելի վնարել :

Դպրոցներու վերաբացումին՝ ալոյց ձեռքը ընկիր դասագիրքեր տուած ըլլալու վստահութեամբ՝ գործածել՝ Փայագաչեանի հրատարակութիւններէն՝ Ա.—Պզտիկներուն Թռչալիւսութիւնը : Բ.—Թռչալիւսութիւն Տարակիւն Դասընթացի (Ա. և Բ.Տարի) : Գ.—Պզտիկներուն Աշխարհագրութիւնը (քարտէսներով) : Դ.—Աշխարհագրութիւն Տարակիւն Դասընթացի : Ե.—Պզտիկներուն Երգարանը (հաւաքածոյ մանկապարտէզի երգերու) : Զ.—Այբեկարան Ընթերցարան ֆրանսերէն չեզոյի